պոսն, (1815 · 'ի 1 Դեկտեմբերի)։ Սա հետեւեցաւ հանել 'ի Դրանէ զհրովարտակն Եփրեմ Կաթուղիկոսին Էջմիածնի, այլ դժուարանայր, զի յաւուրս Նախորդին իւրոյ կնճռեալ էր խնդիրն։ Վասն բռնութեան Կուսակալին Դամասկոսի յառաջադոյն մատուցին գիր աղաչանաց 'ի Դուռն Փաշայի, այլ օգտեցան և ոչ ինչ, և ապա մատուցին առ Արքայ, և 'ի սոյն աւուրս դտաւ 'ի դիւանս արձանագրութիւն հին հրովարտակին վասն այնր տրոց, և սկսան հետեւիլ կարգաւորել զայն գործ։ Պօղոս Պատրիարք կամեցաւ դարձուցանել զառաջնորդութիւն Կիպրոսի 'ի վերայ Երուսաղէմի, որոյ և զհրովարտակն էառ, և խոստանայր օրինադրել և տալ միշտ յիշել 'ի Պէրաթն Պատրիարքաց Երուսաղէմի, որպէս յառաջադոյն Յովակիմ Պատրիարք խնդրեալ էր 'ի Զաքարիայ Պատրիարքէ Կաղզվանցւոյ, գրելով առ Սարգիս փոխանորդ իւր 'ի Կոստանդինուպոլիս։

Ակնցի, Կարնեցի և Վանեցի ուխտաւորք դարձ արարեալ յԵրուսաղէմէ 'ի հայրենիս իւրեանց, հասին 'ի կողմանս Մելտինոյ Հայոց · յափշտակեցան 'ի Ռշուան կոչեցեալ Քիւրտ ցեղէ, ընդ որս էր և Թորոս վարդապետ Նուիրակ Ակնայ, որոց վնասքն հաշուեցան 48,000 դահեկան, (1817)։

Այլազգիք Սիոնի ճանապարհ արարեալ էին 'ի վանաց Ս · Հրեշտակապետի, յորոց հասանէր չարիք և վնաս մայրապետաց և միաբանաց, Հայք քննութեամբ եւ Արքունի հրովարտակաւ եդին փականս մեծ դրան և աղեկին զայն, և յաւուրս Թէոդորոսի վերստին սկսան այլազգիք անցանել անտի եւ ստիպէին թողուլ բաց զդուռն զայն, այլ Թէոդորոս ետ նորոգել զհրովարտակն եւ արգել օրինօք Դատարանի զբռնութիւնս նոցա։ Դարձեալ վէճ ցունաց ընդ Հայոց վասն երից հետեւակաց, որք են Հապէշք, Ղըպթիք եւ Ասորիք · եւ 'ի լինել քննութեան 'ի Դատարանի ընթերցան զվաւերական գրեանս Հայոց, և արգելին ըստ ցոյնս 'ի հակառակութենէ, և Դատաւորն գրեալ ծանոյց 'ի Դուռն, (1817)։

Իսկ Թէոդորոս Պատրիարք Երուսաղէմի, որ տարաւ բաղմադիմի վշտաց և հմբեր դառն նեղութեանց և տառապանաց իւրոյ անբարի ժամանակին, հասեալ 'ի բարւոք ծերութիւն, ալեւորեալ լի աւուրքք, հանդեաւ խաղաղու-